ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

«Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագիր

Իրականացման ժամանակահատված: 01.03.2023 - 30.06.2026

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 1 200 000

Ընդհանուր բյուջե: € 2 000 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Konrad Adenauer Foundation, Armenian branch (KAS)

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

facebook.com/YICgyumri,
facebook.com/MediaInitiativesCenter/,
facebook.com/worldvisionarmenia.official/,
facebook.com/EmpoweringArmenianYouth

Նախագծի նկարագրություն:

Երիտասարդների ավելի ակտիվ մասնակցությունը հասարակական տարբեր ոլորտներում խրախուսելու նպատակով, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը Վորլդ Վիժն Հայաստանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Գյումրու Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնի հետ համագործակցությամբ մշակել է ծրագիր, որի նպատակն է զարգացնել Հայաստանում քաղաքացիական հասարակության կարողությունները՝ երիտասարդներին կրթելու և հզորացնելու, ապագա առաջնորդներ ձևավորելու, ինչպես նաև երկրի սոցիալական, քաղաքական և հասարակական կյանքում վերջիններիս ավելի ակտիվ մասնակցությանը նպաստելու համար:
Ծրագիրն ուղղված է երիտասարդական ՔՀԿ-ներին, երիտասարդական նախաձեռնություններին, երիտասարդական ոլորտում աշխատողներին, ինչպես նաև երիտասարդ առաջնորդներին և մենթորներին, երիտասարդ քաղաքական գործիչներին, երիտասարդ ինֆլուենսերներին, վիդեոբլոգերներին, փոդքասթերներին, տեղական և ազգային մակարդակներում որոշում կայացնողներին: Ծրագիրը հնարավորություն կտա երիտասարդական ՔՀԿ-ներին զարգացնելու իրենց կարողությունները՝ ավելի լավ կառավարման և ռեսուրսների ճիշտ օգտագործման համար: Երիտասարդ մասնագետները կստանան կրթաթոշակներ և կզարգացնեն իրենց հմտությունները՝ տարբեր միջավայրերում աշխատելու, համայնքային խնդրները թիրախավորելու, ինչպես նաև տեղական տարբեր նախաձեռնություններ մշակելու և իրականացնելու համար: Գործողությունը նախատեսում է երիտասարդների շրջանում պետական կառավարման հմտությունների զարգացում՝ Հայաստանում օրենսդիր,

Ակնկալվող արդյունքներ:

Ծրագրի ակնկալվող հիմնական արդյունքներն են՝
1. Երիտասարդների կարողությունների ամրապնդում Հայաստանում հանրային, համայնքներին, քաղաքացիական հասարակության և քաղաքականությանն առնչվող հարցերում բովանդակալից մասնակցության համար:
2. Երիտասարդների հմտությունների և/կամ գիտելիքների զարգացում առաջնորդության և քննադատական մտածողության, ժողովրդավարական քաղաքացիության, հանրային քաղաքականության և օրենսդրական գործընթացների վերաբերյալ:
3. Երիտասարդական ոլորտում աշխատողների և երիտասարդական ՔՀԿ-ների տեխնիկական կարողությունների ամրապնդում:
4. Առաջնորդության ծրագրերի փորձնական իրականացում և ինստիտուցիոնալացում տեղական և ազգային մակարդակներում:
5. Հայ բնակչության իրազեկվածության բարձրացում երիտասարդության հետ կապված թեմաների վերաբերյալ, ներառյալ մեդիագրագիտություն, փաստերի ստուգում, թվային քաղաքացիություն և բովանդակության ստեղծում: